

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11»

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոտեխնոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայանի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 09-ին ժամը 10:34:27-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2025 թվականի սեպտեմբերի 10-ին ժամը 10:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Շրջակա միջավայրի նախարարության կողմից հայտարարված «Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայանի» ձեռքբերման բաց մրցույթի (ծածկագիր՝ ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11) տեխնիկական բնութագրերում նշվում է, որ ռադարի սնուցումը պետք է ապահովվի բացառապես մարտկոցային համակարգերի և արևային վահանակների հաշվին, իսկ դիզելային գեներատորների կիրառումը կտրականապես արգելվում է՝ շրջակա միջավայրի պահպանության նկատառումներից ելնելով:

Այս կապակցությամբ խնդրում ենք տրամադրել պաշտոնական պարզաբանումներ և հաշվարկներ.

Հարցադրում N 1:

Հուսալիության հիմնավորում

Որ հաշվարկների հիման վրա է արված այն եզրակացությունը, որ արևային վահանակների և մարտկոցների համակցումը կարող է երաշխավորել մետեոռոդարի անխափան աշխատանքը 5 օրվա ընթացքում՝ արտաքին էլեկտրամատակարարման բացակայության պայմաններում: Խնդրում ենք ներկայացնել կոնկրետ տվյալներ.

- տվյալ վայրում արևային օրերի միջին քանակը ըստ եղանակների,
- արևային ճառագայթման միջին ինտենսիվությունը (Վտ/մ²) ըստ եղանակների:

Պարզաբանում N 1:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից և չի առնչվում տեխնիկական բնութագրի պայմաններին:

Հարցադրում N 2:

Էկոլոգիական ասպեկտ

Ի՞նչով է հիմնավորվում այն պնդումը, որ մեծաքանակ մարտկոցների կիրառումը էկոլոգիապես ավելի անվտանգ է, քան դիզելային գեներատորի օգտագործումը որպես վերբերող աղբյուր, որը կարող է անհրաժեշտ դառնալ ամենավատ դեպքում տարվա ընթացքում ընդամենը մի քանի անգամ: Պետք է հաշվի առնել, որ մեծածավալ մարտկոցների արտադրությունն ու հետագա վերամշակումը նույնպես լուրջ էկոլոգիական ազդեցություն ունեն

Պարզաբանում N 2:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից և չի առնչվում տեխնիկական բնութագրի պայմաններին:

Հարցադրում N 3:**Ռազմավարական ռիսկ.**

Ի՞նչ է նախատեսվում անել այն դեպքում, եթե արևային էներգիայի բացակայության ժամանակահատվածը գերազանցի 5 օրը: Նշում ենք, որ մետեոռոպարը ռազմավարական նշանակության օբյեկտ է, և նրա հուսալիությունը չի կարող կախված լինել միայն եղանակային պայմաններից: Դիզելային գեներատորի բացառումը նման պարագայում կարող է վտանգել համակարգի անխափան աշխատանքը:

Մենք գտնում ենք, որ դիզելային գեներատորի կիրառումը՝ որպես վերջին վերբերող միջոց արտակարգ իրավիճակներում, չի կարող էական վնաս հասցնել էկոլոգիային, բայց զգալիորեն կբարձրացնի օբյեկտի կայունությունն ու ռազմավարական հուսալիությունը:

Իսնդրում ենք հաշվի առնել նշված հանգամանքները և տրամադրել համապատասխան պարզաբանումներ:

Պարզաբանում N 3:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից և չի առնչվում տեխնիկական բնութագրի պայմաններին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **L.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:

Էլեկտրոնային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով